դէն դագաղը կրողներն ու յուղարկաւորները։

Թաղելու ժամանակ գերեզման փորողը երեք բուռ հող է գցում գերեզմանի մէջ, որն օրհնում է քահանան. միւս յուղարկաւորներն էլ մի-մի բուռ հող գցում վրան. ապա գերեզման փորողները հողով լցնում են գերեզմանը և մի թումբ շինում վրան և խունկ ծխում։ Թաղման կարգն աւարտելուց յետոյ յուղարկաւորներն իրարև մխիթարութիւն հետևեալ խօսքերն են ուղղում ննջեցեալի տիրոջը.—«Աստուած օլորմի հոգուն, Աստուած գառատանը քաղցը անի», իսկ նա էլ պատասխանում է.—«Աստուած տայ ձեզ ուրախութիւն, մենք գանք ձեր ուրախութեանը»։ Այնուհետև խումբովին գնում են մի առուի կամ աղբիւրի ջրի վրայ և լուացուում, ապա հաւաքւում ննջեցեալի դռան առաջ և քահանային սպասում։ Ննջեցեալի տէրը բոլորին հրաւիրում է ներս ճաշի, այս ճաշը կոչւում է «հոգէհաց»։ Ընդհանրապէս փլաւ են պատրաստում։ Կանայք և աղամարդիկ առանձին ճաշում են, ապա բոլորը կանգնում են, քահանան հոգեհանգիստ է կատարում, որից յետոյ ցրւում են։ Իսկ մօտիկ ազգականներն երեք օր «հոգէհաց» են ուտում։

Այնուհետև ննջեցեալի տանն երեք օր սուգ են պահում. աղամարդիկ չեն սափրւում, գործի չեն գնում, իսկ կանայք կար չեն անում, ճախարակ չեն մանում, ոչ մի տեղ չեն գնում։ Սուգի առաջին օրը կոչւում է «թաղմաք», երկրորդ օրը՝ «էգնահոգ», իսկ երրորդ օրը՝ «եաշմաղ լւանալ»։ Նոյն օրը կանայք քնիթակալները, իսկ աղամարդիկ թաշկինակները լւանում են, որով վերջանում է սուգը։ Բացի եօթներորդից՝ յառաջնորդին և տարեւորին ունեւոր մարդիկ երբեմն պատարագ են մատուցանել տալիս ու հոգու հաց բաժանում, իսկ տարին մի անգամ գնում են գերեզմանատուն, խունկ ծխում և նրանց հոգու փրկութեան համար հաց բաժանում։

Գերեզմանատուն։ Գերեզմանատներն ընդհանրապէս գտնւում են գիւղին մօտ, արտերի կամ ճանապարհի կողքին։